<< ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա ***<u>Անգլերեն</u>***

Մասնակից՝ <u>Սառա Անանիկյան</u>

Ղեկավար՝ <u>Գայանե Վարդանյան</u>

Թեմա՝**<u>Քառապաշարի ուսուցում</u>**

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Գլուխ 1

Բառապաշարի ուսուցումը օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում----------4

1.1 Բառապաշարի ընտրության սկզբունքները---------- 6

1.2 Բառապաշարի ուսուցման ձևերը---------- 9

Գլուխ 2

Լեզվանյութի ամրապնդումը բառապաշարային և քերականական

վարժությունների միջոցով----------10

2.1 Բառապաշարի ուսուցումը հաղորդակցման համատեքստում---------- 10

2.2 Լեզվական վարժությունների, թեստերի կազմում----------12

Եզրակացություն----------13

Օգտագործված գրականության ցանկ----------14

Ներածություն

Արդի պայմաններում օտար լեզուների իմացությունը, օգտագործումն օրեցօր դառնում է անհրաժեշտություն, նոր մշակույթների և մարդկային նոր հարաբերությունների ձևավորման գործում: Օտար լեզուների իմացությունը դառնում է կարևոր պայման տարբեր մասնագիտություններ ունեցող անհատների համար: Օտար լեզուների իմացությոնը հնարավորություն է տալիս շփվելու տարբեր մշակույթների պատկանող մարդկանց հետ, և անկախ տարիքից, այն անհրաժեշտ է դառնում արդի ժամանակներում:

Այսօր օտար լեզվի, հատկապես անգլերենի իմացությունը հասարակության համար դարձել է անհրաժեշտություն: Մեր երկրում անգլերեն լեզվի ուսուցմանը մեծ ուշադրություն է դարձվում: Անգլերենի ուսուցումը պահանջում է յուրահատուկ մոտեցում՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները, տարիքային խումբը և այլ գործոններ: Մեր երկրում անգլերեն լեզուն սկսում են դասավանդել հիմնականում երրորդ դասարանից: Դասավանդող ուսուցչի կարևորագույն խնդիրներից է յուրահատուկ մոտեցում ցուցաբերել տարբեր տարիքային խմբերում ընտրելու օտար լեզվի մեթոդիկան, հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունները, անհատական առանձնահատկությունները և զարգացնել սովորողների հաղորդակցական և այլ կարողությունները:

Այս հետազոտական աշխատանքում անդրադարձել եմ բառապաշարի ուսուցմանը, որը կարելի է սահմանել որպես լեզվական նյութի, գիտելիքի օգտագործման կոմպետենցիա, բառապաշարի ուսուցման առանձնահատկություններին որպես հաղորդակցության հիմնական մասերից մեկին:

Բառապաշարի ուսուցումն անգլերեն լեզվում նպաստում է սովորողների հաղորդակցման նպատակների իրականացման անհրաժեշտությամբ:

Հետազոտության առարկան հանդիսանում է հանրակրթական դպրոցի սովորողների մոտ անգլերեն լեզվի քերականական նյութի և բառապաշարի գործածման ձևավորումը և զարգացումն: Այս հետազոտական աշխատանքը կազմված է հետևյալ մասերից

- Ներածություն
- Գլուխ 1
- Գլուխ 2
- Եզրակացություն
- Օգտագործված գրականության ցանկ

Գլուխ 1

Բառապաշարի ուսուցումը օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում

Տեղեկատվության ընդունումն ու հաղորդումը, ինչպես նաև ցանկացած խոսքային գործունեություն հնարավոր չէ լիարժեք կազմակերպել առանց բառապաշարի առկայության: Բառապաշարի ուսուցումը, հատկապես օտար լեզվի պարագայում, ուսուցման կարևորագույն խնդիրներից մեկն է: Այս հարցը մանրամասնորեն ուսումնասիրվել է տարբեր մեթոդիստների կողմից՝ Մ.Գ.Աստվածատրյան, Գեյզ, Բերման, Ֆոլոմկինա և ուրիշներ:

Բառապաշարի տիրապետումը երեխայի խոսքի զարգացման հիմքն է կազմում, քանի որ հենց բառապաշարում է արտացոլվում խոսքի բովանդակությունը: Այս պարագայում բառապաշարի ձևավորումը պետք է իրականացնել մանկության շրջանում, որն էլ հետագայում կնպաստի երեխայի կապակցված խոսքի զարգացմանն ու հարստացմանը:
Անգլերեն բանավոր խոսքի ուսուցման գործընթացի արդյունավետությունը լիովին ապահովելու համար կարևոր է առանձնացնել լեզվական կոմպետենցիայի այն բաղադրիչները, որոնք կիրառվում են անգլերեն լեզվի բանավոր և գրավոր խոսքում: Դրանք են՝ բառապաշարը, քերականությունը և հնչյունաբանությունը:
Եվ քանի որ մեր աշխատանքի թեման է << Բառապաշարի ուսուցումը>>, ուստի մենք առավելագույնս կխոսենք բառապաշարի ընտրության սկզբունքների, ուսուցման ձևերի և մոտեցումների մասին:

Նախքան բառապաշարի ուսուցումը կազմակերպելը անհրաժեշտ է մշակել մի ռազմավարություն, որը ներառում է հետևյալ փուլերը՝

- Բառի ներկայացում / բացատրում
- Բառի մտապահում / ամրապնդում
- Բառի գործածումը հաղորդակցության մեջ

Տարրական դասարաններում հիմք է դրվում աշակերտների մոտ բառապաշարի ուսուցման և հարստացման գործընթացին, որի միջոցով ընդլայնվում է սովորողների մտահորիզոնը, ձեռք են բերվում նոր գիտելիքներ: Այդ պրոցեսը իրականացվում է բառակազմական, բառի մասին բացատրման և նրա ճիշտ գործածման վերաբերյալ վարժանքների միջոցով: Այդ նպատակով արդյունավետ է կատարել ճանաչողական և ստեղծագործական բնույթի վարժություններ: Կրտսեր դպրոցական տարիքում սովորողին պետք է վարժեցնել տեքստում ճանաչել նոր բառը, բառարանում գտնել անծանոթ բառի բացատրությունը և այն փորձել կիրառել՝ կազմելով նոր բառեր ու բառակապակցություններ, ինչպես նաև՝ նախադասություններ: Միջին դպրոցում սովորողները ծանոթանում են առավել բարդ և ծավալուն տեքստերին: Այս դեպքում նրանք կատարում են բազմաբնույթ առաջադրանքներ՝ սահուն ընթերցել տեքստը, վերլուծել նրա իմաստը, հստակ պատասխանել ուսուցչի հարցերին, փորձել արտահայտել սեփական կարծիքը այս կամ այն թեմայի շուրջ: Իսկ արդեն ավագ դպրոցում սովորողները պետք է կարողանան լիարժեք հաղորդակցվել իրենց հասակակիցների հետ օտար լեզվով, ներկայացնեն իրենց մտքերն ու պահանջները, կատարեն հետազոտական աշխատանք որևէ առարկայի բնագավառում, դրսևորեն գիտակցական վերաբերմունք ապագա մասնագիտության և ցանկալի աշխատանք ձեռք բերելու ուղղությամբ:

Բառապաշարի ուսուցումը ներառում է հետյալ խնդիրները՝

- Բառապաշարի ընտրություն
- Ընտրված բառապաշարի մեթոդական դասակարգում
- Բառապաշարային նյութի ամրապնդում
- Բառապաշարային նյութի կիրառումը հաղորդակցության մեջ / Coljour.files.wordpress.com.2021/

Մեթոդիկայում ուսուցման նպատակներով բառապաշարը դասակարգում են՝ Վերարտադրողական (պրոդուկտիվ) կամ ակտիվ (խոսել, գրել) բառապաշար

Ընկալողական (ռեցեպտիվ) կամ պասիվ(ունկնդրել,ընթերցել) բառապաշար

Ներգոր (պոտենցիալ) բառապաշար

Մ.Գ.Աստվածատրյանը իր << Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա>> աշխատության մեջ բազմիցս խոսել է <<հաղորդակցական-լեզվական կոմպետենցիայի մասին, որը կարելի է դիտարկել որպես մի շարք բաղադրիչների ամբողջություն. Լեզվական (linguistic), հանրալեզվական (socio-linguistic) և գործաբանական(pragmatic),

որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ընդգրկում է գիտելիքներ, կոմպետենցիա>> /Մ.Գ. Աստվածատրյան 2002,57/:

Ըստ Աստվածատրյանի, բառապաշարի պրոդուկտիվ տիրապետումը կապված է մի շարք կոմպետենցիաների հետ,որի համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

- Մտաբերել, գտնել բառը հիշողության մեջ
- Ճիշտ արտասանել բառը և գտնել նրա քերականական ձևը
- Կապակցել այլ բառերի հետ
- Ներառել ընդհանուր համատեքստում

Բառապաշարի ռեցեպտիվ տիրապետումը կապված է հետևյալ կոմպետենցիաների հետ՝

- Ճանաչել և հասկանալ բառային միավորը
- Տարբերել ձևով և արտասանությամբ նման բառերը
- Կռահել ըստ բառակազմական բաղադրիչների

Տարբերակում ենք բառապաշարի երկու հիմնական խումբ՝ իրական /ռեալ/ բառապաշար, որը ներառում է ռեցեպտիվ և պրոդուկտիվ պաշարները, և ներզոր /պոտենցիալ/: ՈՒսանողները սովորում և ձեռք են բերում ռեալ բառապաշար ուսուցման տարբեր փուլերում: Իսկ այն բառերը, որոնք ուսուցման առարկա չեն եղել, սակայն հնարավոր է կռահել դրանց իմաստները, կազմում են ներունակ կամ պոտենցիալ բառապաշար:

1.1 Բառապաշարի ընտրության սկզբունքները

Միանգամայն պարզ երևում է, որ իրականում հնարավոր չէ իմանալ լեզվի բոլոր բառերը: Դրա համար դպրոցներում դասավանդվող բառապաշարը պետք է լինի սահմանափակ: Խնդիրն այն է, թե ինչ բառեր սովորողները պետք է հիշեն ամբողջ բառապաշարից: Յուրաքանչյուր լեզվում կան հազարավոր բառեր, հետևաբար ինչ բառեր կամ բառակապակցություններ պետք է դասավանդվեն դպրոցում [Ван Дейк, 1985]:

Այս առիթով հարկ է առանձնացնել օտար լեզուների դասավանդման մեջ

բառապաշարի ընտրության մի քանի սկզբունքներ: Դրանք են՝

- Հաճախականության սկզբունք- Այս դեպքում պետք է ընտրվեն այնպիսի բառեր, որոնք հաճախ են օգտագործվում լեզվում: Նման բառերի հաճախակի օգտագործումը նպաստում է լեզվի արագ յուրացմանը: Բերենք օրինակներ՝
  " Open the window", "close the door", "read the lesson"
- Կապակցելիության սկզբունք – Այստեղ սովորողները հաղորդակցվելու համար պետք է կարողանան սահուն և ճիշտ ձևով կապակցել բառերը, կազմել դրանցով իմաստալից արտահայտություններ ու նախադասություններ: Օրինակ՝
  to do(անել)-to do housework, to do harm(տնային գործերով զբաղվել,վնաս պաճառել)
  Ընտրված բառերը պետք է ավելի հաճախ օգտագործվեն դպրոցական թեմաներում՝ դրանք զուգակցելով այլ բառերի հետ: Օրինակ՝
  Family: father, mother, sister, brother (ընտանիք՝ հայր, մայր, քույր, եղբայր):
- Բառակազմական արժեքի սկզբունք- Այստեղ բառերը պետք է ունենան բառակազմական բարձր արժեք, այսինքն՝ դրանք արդյունավետ լինեն սովորողի բառապաշարը հարստացնելու համար: Օրինակ՝
  help-helpful, helpless
  colour- colourful, colourfulness
- Բազմիմաստության սկբունք- Այս սկզբունքով նվազագույն բառապաշարի համար ընտրվում են այն բառերը, որոնց առաջնային իմաստներն առավել գործածական են: Տվյալ դեպքում միևնույն բառը կարող է արտահայտել մեկից ավելի իմաստ: Դա արդեն մենք կարող ենք հասկանալ կոնտեքստի բովանդակությունից:
  Օրինակ՝ table-1.սեղան, 2.հացկերույթ, 3.աղյուսակ, 4.սարահարթ, 5.տախտակ, 6.երկար ժամանակով հետաձգել,
  bottle- 1. շիշ, 2.շշերի մեջ լցնել, 3.թաքցնել
- Հասկացությունների նկարագրման սկզբունք- Այս սկզբունքով ակտիվ նվազագույնի համար ընտրվում են այն բառերը, որոնցով կարելի է արտահայտել ավելի շատ արտահայտություններ: Օրինակ՝
  Thing, part, point, target, issue
- Ոճական չեզոքության սկզբունք- Այստեղ ընտրված բառերը պետք է լինեն ոճապես չեզոք, քանի որ դպրոցներում ոճական խնդիրները չեն շոշափվում:
  Օրինակ՝ play, morning, work, home, live, go
  Ընտրված բառերը կարելի է խմբավորել երկու դասի՝
  1. կառուցվածքային բառեր, որոնք կազմում են լեզվի ձևը և կառուցվածքը,
  2. անվանական բառեր, որոնք արտահայտում են իմաստ և մենք դրանք կիրառում ենք խոսքում:

Բացի դրանից պետք է հաշվի առնենք, որ յուրաքանչյուր բառ ունի իր ձևը,

իմաստը և օգտագործումը: Կան որոշ բառեր, որոնք դժվար են ձևով, բայց հեշտ՝ կիրառման մեջ: Օրինակ՝beautiful, daughter, teacher, cousin (գեղեցիկ, դուստր, ուսուցիչ, զարմիկ):

Կան այնպիսի բառեր, որոնք հեշտ են գրելաձևով, բայց դժվար են օգտագործման մեջ: Օրինակ՝ seem, get, happen, think (թվալ, ստանալ, պատահել, մտածել):

Բառերը կարող են լինել նաև կոնկրետ, վերացական և կառուցվածքային: Կառուցվածքային բառեր սովորելը բավականին դժվար է: Այդ իսկ պատճառով ուսուցիչը պետք է դասակարգի դրանք ըստ յուրացման դժվարությունների:

Ամերիկացի հոգեբան Բենջամին Բլումը առանձնացնում է ուսումնական նպատակների դասակարգման մասին ուսմունքը, որը հայտնի է

<< տաքսոնոմիա >>/ աստիճանակարգում/անվամբ: Այն իրականացվում է հետևյալ փուլերի հաղթահարման ընթացքում՝

- Գիտելիք- մտապահում և վերարտադրում է նյութը
- Ընկալում- կարող է նկարագրել կապերը առկա երևույթների միջև
- Կիրառում- օգտագործում է սովորածը
- Վերլուծություն- տարանջատում և դասակարգում է նյութը
- Համադրություն- սովորողն ինքն է կազմում և ստեղծում արժեքավոր նյութ
- Գնահատում- կարողանում է դատողություններ անել և գտնել նպատակահարմար լուծումներ

Իր բազմամյա ակտիվ մանկավարժական գործունեության ընթացքում Բլումը եկել է հետևյալ եզրահանգման.<< Այն, ինչ կարող է սովորել ինչ-որ մեկը, կարող են սովորել բոլորը: Ամեն ինչ կախված է նախորդ և ներկա ուսուցման պայմաններից և միջավայրից>>:

Ըստ նրա՝ յուրաքանչյուր ուսուցման միջավարում շատ կարևոր է սկսել ամենացածր մակարդակից և աշխատել բուրգի մակարդակների աստիճանաբար ապահովման ուղղությամբ:

1.2 Բառապաշարի ուսուցման ձևերը

Սովորողի կողմից լեզուն առավել արդյունավետ յուրացնելու ոճով է պայմանավորված ուսուցման ձևերի ընտրությունը: Եվ պատահական չէ, որ աշակերտների մեծ մասը նախընտրում է աշխատել << աշակերտակենտրոն>> ոճով: Նման դեպքում սովորողները փորձում են իրենց վրա վերցնել նյութի ծանրությունը: Մնացած մասը կարողանում են նյութը հեշտությամբ մտապահել տեսողական հիշողությամբ:

Եթե ուսուցումև իրականացվում է խմբային, դասարանային կամ լսարանային պայմաններում, ապա ուսուցման գործընթացը առավել ընդլայնվում է ՝ կապված նոր նյութի ծավալի և բարդության հետ:

Մեկից ավելի սովորողների հետ աշխատելիս անհարաժեշտ է լինում ,մեկ դասաժամի ընթացքում անցում կատարել տարբեր ոճերի, այսինքն՝ աշխատել դասավանդման տարբեր մեթոդների համակցմամբ:

Ինչպես նկատեցինք, լեզվաբանական իրազեկությունը ներառում է գիտելիքներ ու կոմպետենցիաներ բառապաշարի, հնչյունաբանության, շարահյուսության, ինչպես նաև լեզվի այլ առանձնահատկությունների մասին:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն բառապաշարի ներմուծմանն ու հարստացմանը, այլ նաև՝ քերականական նոր նյութի բացատրմանը, առանց որի հնարավոր չէ կազամակերպել ճիշտ կապակցված խոսքի ամրապնդումը:

Այսօր, երբ սովորողների հետաքրքրությունները բազմազան են, կարևոր է օտար լեզվի ոսուցումը հաճելի ու հետաքրքիր կազմակերպելը:

Այս առիթով նոր բառեր ներմուծելիս չպետք է բավարարվենք միայն ուսուցման ավանդական մեթոդներով ու միջոցներով, այլ փորձենք ներկայացնել առավել մատչելի ու հետաքրքիր լուծումներ բառապաշարը ուսուցանելու հաղորդակցական միջավայրում:

Այսպիսով, բացահայտելով բոլոր լեզուների համար ընդհանուր, առանցքային բաղադրիչները, անհրաժեշտ է հստակ տարանջատել նպատակները. վերջնական նպատակներից բացի սահմանել նաև միջանկյալ նպատակներ՝ յուրաքանչյուր դասարանի համար, և մասնավոր նպատակներ՝ յուրաքանչյուր դասի համար:

Սույն գլխում փորձեցինք մանրակրկիտ կերպով ներկայացնել բառապաշարի ընտրության սկզբունքները և դրանց ուսուցման ձևերն ու մոտեցումները:

Գլուխ 2

Լեզվանյութի ամրապնդումը բառապաշարային վարժությունների միջոցով

2.1 Բառապաշարի ուսուցումը հաղորդակցման համատեքստում

Բառապաշարային գիտելիքները զարգացնող ռազմավարությունը անընդհատ փոփոխվում է, համալրվում նոր վարժություններով, ժամանակի հետ փոփոխվում են նաև ուսուցման մեթոդները, նաև՝հասարակության պահանջները:

Բառապաշարի ուսուցումը լեզվակրթության հիմքն է, առանց որի անհնար է տվյալ լեզվով հաղորդակցվելը: Հաղորդակցությունն առավել արդյունավետ կարելի է զարգացնել բառապաշարի հարստացմամբ և ճիշտ կիրառմամբ: Այստեղ ևս կարևորվում են սովորողների քերականական, հնչյունաբանական գիտելիքները և հանրամշակութային խոսույթային կոմպետենցիաները: Ներկա ժամանակներում սովորողները բազմապիսի նպատակներ ու հետաքրքրություններ ունեն օտար լեզուներ ուսուցանելու նկատմամբ: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է նման գործընթացը կազմակերպել հաճելի և բարենպաստ միջավայրում: Նոր բառեր ներմուծելիս չպետք է բավարարվենք միայն ավանդական մեթոդներով, այլ փորձենք ներկայացնել նոր և հետաքրքիր տարբերակներ՝ բառապաշարը նոր և հաղորդակցական համատեքստում ուսուցանելու համար:

Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթաց է, որն իրականացվում է ժեստերի, դենքի արտահայտությունների, խոսքի, հեռախոսի, հեռուստացույցի, փոստային հաղորդագրությունների և այլնի միջոցով: Հաղորդակցությունը շատ ավելին է, քան պարզապես ինֆորմացիայի (տեղեկատվության) տրամադրումը: Հաղորդակցությունը տեղի է ունենում, երբ << ինչ- որ մեկը հաղորդագրություն է ուղարկում, իսկ մյուսը ստանում է այն>> [Petrie, 2011,23]:

Տվյալ դեպքում ուսուցչի և աշակերտի զրույցը չի կարող միայն դիտվել որպես արդյունավետ հաղորդակցություն նրանց միջև: Աշակերտների միջև շփումը նույնպես կարևոր դեր ունի դասարանում:

Թերելը և Կրաշենը /1983 / սահմանել են հաղորդակցման կոմպետենցիան որպես լեզվի օգտագործում սոցիալական հաղորդակցություններում, առանց քերականական վերլուծության: Նրանք հաղորդակցական կոմպետենցիան կապում էին շփման հետ և հատուկ ուշադրություն չէին դարձնում քերականական կոմպետենցիային: Դա նշանակում է

, որ հաղորդակցական կոմպետենցիան առավելագույնս դրսևորվում է շփման մեջ, որի զարգացումը, համարվում է լեզվի ուսուցման հիմնական նպատակը:

Օտար լեզուներ ուսուցանելիս հաղորդակցական զարգացումն ընդգրկում է մի շարք կարևոր գործընթացներ՝

- Նոր տեղեկատվության ընկալում
- Մտապահում
- Ճանաչում
- Մշակում
- Փոխանցում

Դրանցից յուրաքանչյուրը ֆիզիկական և մտավոր գործողությունների համադրություն է՝ պայմանավորված մի շարք գործոններով (սովորողի տարիքը, մտավոր ներուժը, աշխարհայացքը, լեզվամտածողությունը և այլն):

Նոր բառապաշարի ներմուծման և ամրապնդման համար անհրաժեշտ է ստեղծել փոխներգործուն միջավայր: Եկեք դիտարկենք հետյալ վարժությունը՝

“ Guess the meaning” (<< Կռահի՛ր իմաստը>>):

Այստեղ ուսուցիչը նախապես ներկայացնում է թեման, որից հետո առաջարկում է աշակերտներին ակտիվորեն մասնակցել տվյալ հարցի քննարկման շուրջ: Այն իրականացվում է մի քանի փուլերով՝

Փուլ 1. Ուսուցիչը գրատախտակին գրում է մի ասույթ, որում բաց է թողնված բառը, օրինակ՝ “ A tree is known by its … /fruit/ ’’

Փուլ 2. Ուսուցիչը սովորողներին առաջարկում է կռահել բառը:

Հնչում են բազմաթիվ պատասխաններ: Ի վերջո ընտրվում է ճիշտ տարբերակը:

Փուլ 3. Երբ լրացվում է բաց թողնված բառը՝ fruit, ուսուցիչը առաջարկում է սովորողներին պարզաբանել ասույթի իմաստը:

“ A tree is known by its fruit ”.

<< Ծառը պտղով են ճանաչում>>, կամ << Պտուղը ծառից հեռու չի ընկնում>>:

Այնուհետև սովորողները բերում են տարբեր օրինակներ, ներկայացնում պատմություններ, որոնք առնչվում են տվյալ ասույթի հետ:

Բանավոր խոսքում հաճախ ենք ունենում զրույցներ, երկխոսություններ, որոնցում յուրաքանչյուր միտք կարող է արտահայտվել մեկ կամ մի քանի բառով: Օրինակ՝ “ Coffee”, “ Milk”?

“ Thank you!”

“ With pleasure!”

Նմանատիպ զրույցները հնարավոր են, սակայն դրանք կարճ են և օգտագործվում են մեր առօրյա կյանքում:

Ինչպես վերը նշեցինք, բառանյութն ընտրելիս կամ ներմուծելիս էական դեր ունի հաղորդակցության թեման: որը պետք է լինի արժանահավատ (authentic) և սովորողներին հետաքրքիր:

2.2 Լեզվական վարժությունների, թեստերի կազմում

Ստուգման և գնահատման ընդունված միջոցներից է թեստը /ստուգում/: Թեստը իր մեջ ընդգրկում է տարբեր առաջադրանքներ: Թեստային ստուգումն ունի հետևալ նպատակները՝

- հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր բաժիններով ստուգել մեծածավալ ուսումնական նյութը
- գնահատել սովորողի ուսուցանվող նյութի յուրացման աստիճանը
- նվազեցնել սուբյեկտիվ գործոնի դերը
- ապահովել հաղորդակցական ուղղվածություն
- ընդգրկել խոսքային գործունեության բոլոր տեսակները

Ստորև ներկայացնում ենք աշակերտներին տրվող թեստային առաջադրանքները՝

I .Fill in the correct preposition.

1. We're going _____ Majorka next week. [Penguim Books,1995]
2. He talks _____ golf all the time.
3. She met her husband _____ a party.
4. My flat is _____ the third floor.
5. The Eiffel Tower is _____ Paris.

II. Gap-filling(լրացում)

Complete the text using the following words: alive , powerful, protect , dead.

I live with my grandmother. She is a very _____ person. She always tells her rules.

When my grandfather was _____ he always _____ me. But now he is _____

III. Match the parts of the sentences.

1. I'm going to the zoo…..…….....	a. to travel abroad.
2. Let's go to the travel agent ……...	b. to wash my hands.
3. You need a passport …….	c. to see the wild animals.
4. I need some soap ……..	d. to book our summer holiday.
5. I need a ruler ……	e. to draw straight lines.

[Penguin Books, 1993]

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի արդյունքում պարզաբանվեց հետևյալ կարևոր հարցերը՝

- Մշակել թեմայի վերաբերյալ մանկավարժների մոտեցումները և ուսումնասիրությունները:
- Սովորողների տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ցույց տալ ուսուցանվող նյութը՝ համապատասխան մեթոդներով:
- Բառապաշարի ուսուցման ընթացքում առաջացած խնդիրները հաշվի առնելով՝ գտնել լուծման եղանակները:
- Անգլերեն լեզվի ուսուցման ընթացքում զարգացնել սովորողբերի լեզվական և հաղորդակցական ունակությունները:
- Մշակել լեզվի յուրացմանը նպաստող նոր մեթոդներ՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները:

  Այսպիսով, օտար լեզուների ուսուցման նպատակն է զարգացնել բանավոր և գրավոր հաղորդակցումը:

  Այսօրվա մանկավարժի խնդիրն է սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, որպեսզի սովորողը կարողանա մտածել,վերլուծել, արտահայտել սեփական կարծիքը թեմայի վերաբերյալ : Սա հնարավորություն կտա սովորողին հաղորդակցվել համաշխարհային մշակույթին, ծանոթանալ այլ ազգերի պատմությանը և հաղորդակցվել օտար լեզվով:

Գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ.Գ.Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա,<< Լույս>> Հրատարակչություն, Երևան, 1985թ.,390 էջ
2. Allen V.F. Tecniques in Teaching Vocabulary. Oxford University Press, 2003
3. Thornbury S. How to teach Vocabulary .-London: Pearson Edwucation Limited, 2010
4. MIT press. Coljour.files.wordpress.com.2021
5. Krashen, Stephen D., and Tracy D. Terrell. “ The natural approach: Language acquisition in the classroom.”(1983)
6. Petrie, P(2011). Communication Skills for Working with Children and Young People: Introducing Social Pedagogy (3rd ed.) London. Jessica Kingsley Publishers.
7. Peter Watcyn-Jones “ Grammar Games and Activities for Teachers”, London, Penguin Books, 1995
8. Peter Watcyn-Jones “ Vocabulary Games and Activities for Teachers”, London, Penguin Books
9. Ван Дейк. Язык. Познание. Коммуникация. - М.,1985